ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 01 >> << փետրվար >> 2020թ. N ՀՊ/27-2020

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2020 թվականի աշխատանքային ծրագիրը՝ 2020 թվականի ձմռան ամիսներին տեղացած ձյան և գարնանային անձրևների հետևանքով հնարավոր հեղեղումներից և գետերի վարարումից մարզի բնակչության գույքը,գյուղատնտեսական հողատարածքները և ցանքատարածությունները պաշտպանելու, հեղեղումների անվտանգ անցկացումը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու, մարզում գետերի ու հեղեղատարների առավել վտանգավոր հատվածների հուների մաքրումն ու ափերի ամրացման միջոցառումների ու աշխատանքների ցանկը կազմելու նպատակով.

Որոշում եմ.

1. Ստեղծել աշխատանքային խումբ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին /Ա. Այվազյան/՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:
3. Աշխատանքային խմբին /Ա..Այվազյան/՝ սույն որոշմամբ նախատեսված ուսումնասիրությունները և աշխատանքները ավարտել մինչև 2020 թվականի փետրվարի 20-ը և կատարման մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը / Վ.Մկրտչյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ Հ.Մաթևոսյան

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

2/1/2020

X

VERIFIED OCSP 2/1/2020 17:05:14 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2020 թվականի փետրվարի 21-ի
ԱՄ/27Ն-2020 որոշման

Աշխատանքային խումբ

Խմբի ղեկավար՝

Ա. Այվազյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Անդամներ՝-

Մ. - Սարիբեկյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Ս.Մխիթարյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Կ. Պետրոսյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Գ.Մելիքյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ

Վ.Միրզախանյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Կ.Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝ Վ.Վարդազարյան

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 01.02.2020 16:43:24 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217